# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322)
64109 , bazum.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

N 016/398
*27 դեկտեմբեր 2018թ.*

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 123-Ա, 124-Ա, 125-Ա և 126-Ա որոշումները:

Առդիր 5 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 123-Ա

### 06-023-0008-0011 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Հենրիկ Գրիգորյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02,05,1991թ-ի թիվ 2 որոշումը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով,, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510 -Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-023-0008-0011 ծածկագրի տակ գտնվող 0,04345 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1980 թ-ին կառուցված 207.89 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Հենրիկ Սանդրոյի Գրիգորյանի /ծնված 1962թ.,/սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Հենրիկ Սանդրոյի Գրիգորյանի /ծնված 1962թ.,/ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Հողամասում առկա են ինքնակամ 2015թ-ին կառուցված 10,42 քմ մակերեսով բնակելի տան մաս և 3,38 քմ մակերեսով աստիճանահարթակ:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Բազում համայնք 2 փողոց թիվ 19:
7. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 20,11,2018թ-ի թիվ 110-Ա և 18,12,2018թ-ի թիվ 120-Ա որոշումները:
8. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար Ս.Հարությունյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 124-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատերերի հայտերը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թ-ի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ 4-րդ և 6-րդ կետերով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Բազում համայնքում գործող անհատ ձեռնարկատերերի հայտերը բավարարել և նրանց տրամադրել ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մեկ տարով համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուներին տրամադրել համապատասխան թույլտվությունները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է 2019թ-ի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

Բազում համայնքի ղեկավարի

27.12.2018թ-ի թիվ 124-Ա որոշման

# Ց Ու Ց Ա Կ

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ

1. Դավիթ Արմենի Հովսեփյան /ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն/
2. Անիչկա Շահվալադի Գրիգորյան /ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն/
3. Աննա Գևորգի Խաչատրյան /ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն/
4. Շուշան Սերյոժայի Դավթյան /ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն/
5. Անահիտ Սերյոժայի Ներսիսյան /ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն/
6. Աննա Վիկտորևնա Ռոդիոնովա /ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն/

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 125-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժաննա Բարիկյանի 2018 թ-ի դեկտեմբերի 26-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով և ՀՀ կառավարության 2007 թ-ի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Բազում համայնքում գործող անհատ ձեռնարկատեր Ժաննա Բարիկյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն մեկ տարով:

2. Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԻՔԱՅԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 126-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. ժաննա Բահիկյանին 2019 թ-ի հունվարի 1-ից 2019 թ-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ տալ 2 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է 2019 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**